Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ1միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Ներառականության մասնագետ – աշակերտ – ծնող – ուսուցիչ համագործակցության կարևորությունը համընդհանուր ներառականության կոնտեքստում:

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցչի օգնական՝ Տաթևիկ Մնացականյան

Ն.Գետաշեն 2022

Բովանդակություն

Ներածություն.....3

1. Համընդհանուր ներառական կրթության կարևորությունը Հ.Հ կրթական ոլորտում.....6

2. Բազմամասնագիտական թիմ: Թիմի հիմնական անդամները: Նրանց գործառույթները.....7

3. Ուսուցիչների դերը ներառական կրթության ոլորտում.....12

3.1 Ինչպե՞ս պետք է ուսուցիչներն աշխատեն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ.....14

4. Ընտանիքը: Ծնողի դերը ներառական կրթության գործում.....16

5 . Եզրակացություն.....19

6 . Օգտագործված գրականության ցանկ.....21

Ներածություն

Հայ ժողովուրդը պատմության մեջ հայտնի է խոցելի խմբերի հանդեպ իր ունեցած մարդասիրական մոտեցումներով: Հնում եկեղեցին իր վրա է վերցրել հաշմանդամներին և կարիքավորներին կրթելու, հոգ տանելու և ներառելու մեծ գործը: Սակայն խորհրդային տարիներին պատկերը փոխվեց. բացվեցին հատուկ հաստատություններ, կենտրոններ, և մարդիկ առանձնացվեցին հասարակությունից, մեկուսացան շրջապատից և միջավայրից: Ընտանիքները տարիներով թաքցնում էին նման երեխաների գոյությունը՝ համարելով այն ամոթալի դժբախտություն: Բարեբախտաբար, այժմ պատկերը բավականին այլ է, և զգալի են դրական տեղաշարժերը հասարակության ընկալման և վերաբերմունքի մեջ: Անշուշտ, ոլորտում հիմնարար բարեփոխումներ են կատարվել՝ շնորհիվ մի շարք հասարակական, այդ թվում միջազգային կազմակերպությունների , ինչպես նաև գործին նվիրված անհատների և ծնողների, ովքեր պայքարել են իրենց երեխաների կրթության իրավունքի և կյանքի որակի բարելավման համար: Աշխարհում ավելի քան մեկ միլիարդ մարդ ապրում է այս կամ այն տեսակի հաշմանդամությամբ: Նրանցից շատերը կյանքի և գործունեության ընթացքում առնչվում են զգալի խոչընդոտների հետ. բացասական վերաբերմունք, խտրականություն, առողջապահական, կրթական, տրանսպորտային և տեղեկատվական ծառայությունների անհասանելիություն և այլն, որի հետևանքով մարդը մեկուսանում է հասարակությունից: Քաղաքակիրթ աշխարհում այդ մարդիկ ունեն հասարակության մեջ ապրելու և իրենց կենսագործունեությունը լիարժեք ծավալելու իրավունք, որից բխում է նաև, որ «Յուրաքանչյուր ոք ունի կրթություն ստանալու իրավունք»: Այդ պատճառով Հայաստանի Հանրապետությունը, քաղաքակիրթ աշխարհի մյուս երկրների պես, փորձում է ստեղծել և կատարելագործման հասցնել մտավոր և ֆիզիկական առողջության խնդիրներ ունեցող մարդկանց ազատ գործունեությունը կարգավորող օրենսդրական փաստաթղթեր, ինչպես նաև վերջիններիս համար ազատ տեղաշարժվելու, հասարակական ծառայություններից օգտվելու, կրթություն ստանալու լավագույն պայմաններ:

ՀՀ կրթության օրենսդրության մեջ հաստատվել են մի քանի դրույթներ, ըստ որոնց՝ առանձնահատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար պայմաններ և նախադրյալներ են ստեղծվում բոլոր հանրակրթական հաստատություններում իրականացնել ներառական կրթության ծրագրեր: Ներառական կրթությունը՝ որպես ներառման քաղաքականության կարևորագույն մաս, իրականացնում է համապատասխան միջոցներ այն սովորողների մասին, ովքեր հաճախ զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից: Որակյալ ներառական կրթության հիմքը մեթոդների, մոտեցումների, ուսումնական ծրագրերի, նորմերի ճիշտ կիրառումն է: Իսկ ԿԱՊԿ ունեցող սովորողներին առանձնահատուկ աջակցություն պետք է ցուցաբերեն ուսուցիչները, ուսուցչի օգնականները և աջակցող հատուկ մասնագետները: Այս կոնտեքստում հատկանշական է, որ յուրաքանչյուր երեխայի կրթության ճիշտ կազմակերպման նախադրյալներից կարևորագույնը ընտանիքն է: Ընտանիքն է այն սոցիալական համակարգը, որը իր մեծ նպաստն է բերում երեխայի դաստիարակության , կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման գործում: Նրա վարքագծի, արժեհամակարգի և աշխարհայացքի ձևավորումը սկզբնավորվում է ընտանիքում, շարունակվում և հիմնավորվում է դպրոցում, այնուհետև կրթական այլ հաստատություններում: Թեման արդիական է նրանով, որ ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթության ներդրման ընթացքում առանձնանում եմ այնպիսի դժվարություններ և խոչընդոտներ, որոնք պայմանավորված են հասարակական վերաբերմունքով, պատկերացումներով, կարծրատիպերով: Այդ գործընթացի հարթ իրականացման համար կարևոր է ներգրավվել հավասարապես բոլոր կողմերին՝ մասնագետ – աշակերտ – ծնող – ուսուցիչ: Իմ հետազոտական աշխատանքը հետապնդում է մի քանի շատ կարևոր նպատակներ,որոնց լիարժեք իրականացման արդյունքում կունենանք կրթված և դաստիարակված սերունդ: Դրանք են.

- Համագործակցություն ապահովել ծնողների, աշակերտների և ուսուցիչների միջև

- Հասկանալ յուրաքանչյուր աշակերտի մտածելակերպը, ներքին համոզմունքները ու աշխարհայացքը
- Փորձել ԿԱՊԿ ունեցող աշակերտին հասցնել ուսուցման առավելագույն մակարդակի
- Կատարել դիտարկումներ,
- Ընդհանուր հայտարարի գալ ամբողջ մանկավարժական թիմի հետ
- Հնարավորինս բացառել <հերառական աշակերտ> հասկացությունը դպրոցում և հասարակության շրջանում
- Պահպանել այն կետերն ու դիրքորոշումը, որոնք վերաբերվում են ուսուցիչ - աշակերտ համագործակցությանը
- Պաշտպանել բոլոր աշակերտների իրավունքները
- Հիշեցնել նրանց իրենց պարտականությունների մասին
- Օգնել և աջակցել բոլոր ուսուցիչներին ուսումնական ամբողջ տարվա ընթացքում:

1. Համընդհանուր ներառական կրթության կարևորությունը Հ.Հ կրթական ոլորտում

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը:

Ներառական կրթությունը կրթական համակարգ է, որն ուղղված է հավասար կրթության և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը: Ներառական կրթությունը ենթադրում է, որ աշակերտները իրենց ողջ բազմազանությամբ և յուրահատկությամբ սովորում են միասին, նույն դպրոցում, նույն դասարանում: Ուսումնական գործընթացում յուրաքանչյուր աշակերտի ներդրումն ու գործունեությունը ներառական կրթությունը շատ բարձր է գնահատում: Այն ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Յուրաքանչյուր երեխա, այդ թվում ԿԱՊԿ ունեցող, կրթության առանձնահատկություններին համապատասխան, պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, առավելագույն մասնակցություն է ցուցաբերում կրթական գործընթացին և ուսուցման միջոցով ապահովում հանրակրթական պետական չափորոշիչով սահմանված արդյունքները: Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն ունեցող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային սոցիալական և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ,

աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն: Բոլոր աշակերտներին որակյալ կրթության տրամադրումը լուրջ մարտահրավեր է ուսուցիչների համար: Ներառական կրթությունը պահանջում է մասնագետների և ընտանիքների կողմից ուսուցման գործընթացի վերակառուցում և երեխաների համար լավագույն կրթական միջավայրի ստեղծում համատեղ ջանքերով, որպեսզի հնարավոր լինի հաջողության հասնել դպրոցական և հասարակական կյանքում: Նման համակառուցումը պահանջում է ոչ միայն ուսուցիչների համագործակցություն, այլև թիմային աշխատանքի տարբեր ձևերի կիրառում: Ուսուցման այս տարբերակը թույլ է տալիս ստեղծել և կատարելագործել դասավանդման նոր ձևեր, նոր մեթոդներ և նորմեր՝ ապահովելով ուսուցման բարձր մակարդակը: Միևնույն ժամանակ այն պահանջում է դասավանդման նոր ձևեր, որոնք լավագույնս կապահովեն բոլոր ռեսուրսների պատշաճ օգտագործումը: Մինչ երկիրն անցնում է ներառական կրթության գործելակերպերին, թիմային աշխատանքը և համագործակցությունը կարևորվում են կրթության բոլոր մակարդակներում: Թե թիմային աշխատանքը, թե՛ համատեղ դասավանդումը աշխատանքի առանցքային բաղադրիչներ են՝ բոլոր աշակերտների ներառումը հաջողությամբ իրականացնելու համար:

2. Բազմամասնագիտական թիմ: Թիմի հիմնական անդամները: Նրանց գործառույթները:

Ներառական կրթության միջոցով ստեղծվեց բազմամասնագիտական թիմ ,որը բազմաթիվ ոլորտներ ներկայացնող մասնագետներից և երեխայի ընտանիքի անդամներից բաղկացած խումբ է: Այն իր մեծ ներդրումն ունի այն համագործակցային կապին, որում ներառված են ներառական մասնագետները՝ հոգեբանը, սոցիալական մանկավարժը, հատուկ մանկավարժը կամ հոգեբանը / լոգոպեդ, տիֆլո, օլիգո, սուրդո/ և հարկ եղած դեպքում ուսուցիչը, ուսուցչի օգնականը, ծնողը և աշակերտը: Նրանց փոխկապակցված աշխատանքի արդյունքում շահող է դուրս գալիս աշակերտը: Թիմի գործողությունները

սկսվում են երեխայի գնահատումից մինչև նրա անհատական ուսումնական պլանի ֆինարկմամբ: Այդ պատասխանատու գործընթացն ունի իր դժվարություններն ու առավելությունները: Թիմն ունի իր համակարգողը: Թիմի համակարգողը պատասխանատու է թիմային հանդիպումների կազմակերպման համար, օրինակ՝ որոշում է հանդիպումների օրը, ժամը և վայրը: Միևնույն ժամանակ համակարգողը՝

- որոշում է թիմի հիմնական կազմը և հրավիրում է հանդիպման,
- համագործակցում է ծնողների հետ և տեղեկացնում հանդիպման մասին,
- նախագահում է ժողովը կամ նշանակում է նախագահի այլ թեկնածու,
- խրախուսում է թիմի անդամներին՝ ակտիվորեն մասնակցելու հանդիպմանը,
- ապահովում է յուրաքանչյուր մասնակցի իրազեկությունը թիմի անդամների արած առաջարկների, դրանց կատարման պատասխանատուի և անհրաժեշտ ռեսուրսների մասին,
- դպրոցական համայնքին տեղեկացնում է թիմի բոլոր անդամների ներգրավվածության և աջակցության մասին,
- ապահովում է համապատասխան ռեսուրսների հատկացումները՝ ելնելով վեր հանված կարիքներից:

Թիմում միասնական աշխատանք կատարող անդամները՝

- հանդես են գալիս որպես միասնական նպատակ ունեցող գործընկերներ,
- ունեն բացառիկ և անհրաժեշտ փորձառություն, հմտություններ,
- արժևորում են յուրաքանչյուրի ներդրումը,
- առաջնորդությունը բաշխում են միմյանց միջև:

Ներառականության մասնագետը՝

- դպրոցի ղեկավարի, դասավանդողների հետ մասնակցում է երեխայի կրթական կարիքի նախնական գնահատմանը, սովորողի անհատական պլանի կազմմանը.
- ներառման կազմակերպման նպատակով վարում է մասնագիտական զարգացման պարապմունքներ դասվարների, կազմակերպիչների, դասավանդողների համար.
- սովորողներին ներառում է իր ղեկավարած նախագծերում.
- մասնակցում է սովորողների խմբում (դասարանում) աշխատանքի անհատականացմանը.
- մշակում է իր մասնագիտության ուղղությամբ ներառականության հեղինակային մոտեցումներ.
- վարում է սովորողի անհատական պլանով որոշված թերապևտիկ պարապմունքներ:

Դպրոցի հոգեբանը ստանձնում է հետևյալ պարտականությունները՝

- երեխայի կրթական կարիքների գնահատում,
- գնահատման տվյալների վերլուծություն և մեկնաբանություն ընտանիքների և թիմի անդամների համար,
- մասնակցություն ուսումնական ծրագրերի փոփոխությունների և աշակերտների կրթական կարիքներին համապատասխան միջամտությունների անհրաժեշտության վերաբերյալ ցենարկումներին,
- շարունակական դիտարկումների իրականացում՝ ուսումնական ծրագրերի փոփոխման նպատակահարմարությունը և միջամտությունների արդյունավետությունը որոշելու համար:

Հատուկ մանկավարժ

Հատուկ մանկավարժի դերը ուսումնական ծրագրի անհատականացումն ու ձևափոխումն է: Ընդհանուր և հատուկ մանկավարժները պետք է ներառական դասարաններում հավասար պատասխանատվություն ունենան դասարանի բոլոր երեխաների համար: Որպես բազմամասնագիտական թիմի անդամ՝ հատուկ մանկավարժը կարող է առաջարկություններ կատարել ուսուցման ձևերը բազմազանեցնելու, լրացուցիչ ռեսուրսներ և

այլընտրանքային մոտեցումներ կիրառելու վերաբերյալ: Հատուկ մանկավարժները նույնպես ունեն իրենց թիմը: Հատուկ մանկավարժի պարտականություններից են՝

- աշակերտի ուսուցման, պլանավորման և գնահատման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- խորհրդատվություն ուսուցչին (համատեղ դասավանդում),
- մասնակցություն գիտելիքների գնահատմանը,
- խորհրդատվություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին ամբողջ ուսումնական գործընթացում, այդ թվում՝ արտադասարանական միջոցառումներում ներառելու վերաբերյալ:

Հատուկ մանկավարժները և ուսուցիչները ծնողների ու աշակերտների հետ կարող են համագործակցել նաև հետևյալ ձևերով.

- ծնողներից հնարավորինս շատ տեղեկատվություն ստանալ երեխայի մասին,
- տեղեկացնել ծնողներին երեխայի առանձնահատկությունների, նրա պաշտպանության, անհատական ուսումնական պլանի (ԱՈԻՊ-ի) կազմման գործընթացում ներգրավվելու նրանց իրավունքի և որպես թիմի անդամների՝ նրանց դերի մասին,
- օժանդակել ծնողներին ԱՈԻՊ-ի կազմման գործընթացը պլանավորելիս՝ ապահովելով, որ նրանց մտքերը, անհանգստություններն ու կարծիքներն արտահայտվեն և լսելի լինեն,
- տրամադրել ծնողներին երեխայի հետ տանը աշխատելու վերաբերյալ առաջարկություններ,
- օգնել երեխային և ծնողին՝ պլանավորելու աշակերտի ապագան դպրոցն ավարտելուց հետո,
- հանդես գալ որպես աշակերտի պաշտպան, այսինքն՝ ներկայացնել նրա շահերը, նախապատվությունները և աշակերտի կամ ծնողների իրավունքները,
- ապահովել, որ աշակերտներն ակտիվորեն մասնակցեն կրթական գործընթացներին, ձեռք բերեն ինքնորոշման հմտություններ, կարողանան սահմանել իրենց նպատակներն ու խնդիրները:

Հատուկ հոգեբանություն: Հատուկ հոգեբանի ուշադրության կենտրոնում է այն անձը, ով ունի հոգեկան, սոմատիկ, ինտելեկտուալ, անձնային, սոցիալական զարգացման խանգարումներ, ինչպես նաև նրանք, ովքեր ունեն կրթության հատուկ պահանջներ՝ պայմանավորված առողջական վիճակով: Հատուկ հոգեբանության բնագավառներն են.

- մտավոր հետամնացություն ունեցող անձանց հոգեբանություն (օլիգոֆրենո հոգեբանություն)
- տեսողական խանգարումներով անձանց հոգեբանություն (տիֆլոհոգեբանություն)
- լսողական խանգարումներով անձանց հոգեբանություն (սուրդո հոգեբանություն)
- խոսքային խանգարումներով անձանց հոգեբանություն (լոգո հոգեբանություն)
- հենաշարժողական համակարգի խանգարումով անձանց հոգեբանություն
- վարքային ոլորտի խանգարումով անձանց հոգեբանություն
- զարգացման բարդ խանգարումներով անձանց հոգեբանություն:

Լոգոպեդ

Լոգոպեդը թիմային աշխատանքներին մասնակցում է հետևյալ ուղղություններով.

- անցկացնում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մանրակրկիտ գնահատում,
- համագործակցում է ընտանիքի և թիմի այլ անդամների հետ,
- մասնակցում է աշակերտի հատկորոշված կրթական կարիքներին համապատասխան ծրագրերի փոփոխման և միջամտությունների պլանավորման գործընթացին,
- իրականացնում է մասնագիտական միջամտություններ (օրինակ՝ զարգացնում է հաղորդակցման հմտությունները, օգնում հաղթահարելու ընթերցանության և գրելու դժվարությունները),

- իրականացնում է շարունակական դիտարկումներ՝ ուսումնական ծրագրերի փոփոխման նպատակահարմարությունը և միջամտությունների արդյունավետությունը որոշելու համար:

3.Ուսուցիչների դերը ներառական կրթության ոլորտում:

Ամբողջ աշխարհում ուսուցիչները դասարանում գործ ունեն բազմազանության հետ՝ լեզվական տարբեր ունակություններ, հաշմանդամություն ունեցող երեխաներ, օժտված երեխաներ և սոցիալական տարբեր շերտերի երեխաներ: Ուսուցիչները դասավանդման նոր մեթոդներին և մոտեցումներին տիրապետելու կարիք ունեն: Հայաստանում ուսուցիչներից ակնկալվում է կիրառել գիտելիքների փոխանցման և կրթության կազմակերպման ամենավերջին մանկավարժական մեթոդները՝ աշակերտներին զինելով այնպիսի արժեքներով, որոնք կնպաստեն օրինակելի և հայրենասեր քաղաքացիներ պատրաստելուն: Այդուհանդերձ, դեռևս լայնորեն կիրառվում են ուսուցչակենտրոն մոտեցումները, իսկ թիրախում միջին վիճակագրական աշակերտն է: Այսպիսի մոտեցումներն արդյունավետ չեն կրթական տարբեր կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելիս: Ներկայումս Հայաստանում ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ուսուցիչների փորձառության հետազոտությունները սակավաթիվ են: Աշակերտների հնարավորությունների բացահայտումը մեծ նշանակություն ունի ներառական կրթության համատեքստում, քանի որ այն ուսուցիչներին հնարավորություն է տալիս ընտրելու յուրաքանչյուր աշակերտին համապատասխան մոտեցումներ, հնարներ ու մեթոդներ: Ուսուցիչը պետք է մասնագիտական թեստ հանձնի, նոր բաներ սովորի: Եվ պարզ է, որ խնդիրը միայն աշխատավարձի բարձրացումը չէ, դա ոչ միայն նոր գիտելիքների, այլև բարոյական նոր արժեքների, մասնագիտական նոր նպատակների ձեռքբերում է: Ուսուցիչը հիմնական մարդն է, ով մեր կրթությունը դարձնում է կա՛մ ներառական, կամ ոչ, քանի որ ներառական կրթությունը ոչ թե քաղաքական խնդիր է, այլ առաջին հերթին մանկավարժական: Ուսուցչից շատ բան է կախված՝ հոգեկան վիճակից մինչև նրա

գիտելիքները: Այսօր շատ կազմակերպություններ ուսուցիչներին նախապատրաստում են ներառման՝ ներառական դաս կառուցելու համար, կրթական զարգացման հաստատություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, հասարակական կազմակերպություններ: Հաջող ընդգրկման համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր դպրոց ունենա մարդիկ, ովքեր հասկանում են և գիտեն ԿԱՊԿՈՒ երեխայի զարգացման առանձնահատկությունները, կարող են կազմել հոգեբանական աջակցության ծրագիր և օգնել ուսուցչին գտնել ճիշտ մոտեցում աշակերտին դասավանդելու հարցում. Ուսուցիչների մոտ 90%-ը կարիք ունի մասնագետների աջակցության: Յուրաքանչյուր դպրոցում ուսուցիչների համար կարևոր է ֆինարկում ունենալ ԿԱՊԿՈՒ երեխաների մասին, կիսվել փորձով և սովորել միմյանցից: Ներառման ռազմավարությունները ֆինարկելու լավ վայր է դպրոցի խորհուրդը:

Կարևոր է ուսուցչի պատրաստակամության երեք հիմնական բաղադրիչ.

- Իմանա երեխայի անհատական առանձնահատկությունները;
- Ընդունի այդ երեխային այնպիսին, ինչպիսին կա:
- Կարողանա շփվել երեխայի հետ և ստեղծի իր հասակակից երեխաների հետ շփման ուղիներ:
- կետը կապված է այն բանի հետ, թե ինչպես են աշխատում ծնողների հետ:

Ուսուցիչները և հատուկ մանկավարժները պետք է ներառական դասարաններում միմյանց միջև կիսեն և հավասար պատասխանատվություն ունենան դասարանի բոլոր երեխաների համար: Դասարանում հանրակրթության ուսուցչի դերը հիմնականում առարկայի ուսուցումն է: Սակայն համատեղ աշխատող թիմում հանրակրթության ուսուցչի դերն ընդլայնվում է ներառելով՝

- առաջնային գնահատում,
- մասնակցություն անհատական ուսումնական պլանի մշակմանը (օգնում է մշակել, վերանայել և համապատասխան փոփոխություններ կատարել),

- աջակցություն միջամտության կազմակերպմանը կրթական ռազմավարությունը սահմանելիս,
- աջակցություն կրթական ծրագրի փոփոխությունների իրականացման գործընթացում,
- բարոյական աջակցություն անձնակազմին հանրակրթության ծրագրում աշակերտի առաջընթացը խթանելու նպատակով,
- դպրոցի և ընտանիքի կապի պահպանում. ուսուցիչը ծնողներին պարբերաբար տեղեկացնում է աշակերտի ուսումնական առաջադիմության մասին, հայտնում է գնահատականները և ներկայացնում է կրթական ծրագիրը:

3.1 Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՆ ԱՇԽԱՏԵՆ ԿԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

Ուսուցիչների հետ կապված խնդիրը բարդ է, պատասխանատու և բազմաշերտ. Սա մի կողմից մասնագիտացված գործունեություն է: Մյուս կողմից ուսուցիչը ստանում է մի խնդիր, որը կատարել պատրաստ չէ, կամ սկզբնական փուլում ունենում է տարատեսակ չհաղթահարված խոչընդոտներ: Նա գիտելիքի, պատրաստվածության պակաս ունի, նրան պարզապես չեն սովորեցրել աշխատել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ: ԿԱՊԿՈՒ երեխան իրավունք ունի հաճախել իր բնակության վայրի դպրոց և ստանալ կրթություն: Անտեղյակության և գիտելիքների պակասի ֆոնին ուսուցիչը հարց է բարձրացնում. «Ինչու՞ պետք է ինքը սովորեցնի ԿԱՊԿՈՒ երեխաներին», կամ. «Եթե ես կատարեմ մի աշխատանք, որին պատրաստ չեմ, ինչպե՞ս դա կազդի իմ աշխատանքի որակի վրա»: Ուսուցիչները շատ աչալուրջ են վերաբերվում իրենց արդյունքներին, և նրանց նաև հետաքրքրում է, թե ինչ կստանան դրա դիմաց: Այստեղ առաջանում է մոտիվացիայի հարցը՝ ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին(Ֆինանսական):Պետք է ֆինանսավորմամբ լուծել տարածաշրջանային խնդիրները, որպեսզի այն դասարանում, որտեղ երկու-երեք ԿԱՊԿՈՒ երեխաներ

կան, ուսուցիչը հավելավճար ստանա: Մեզ դպրոցական խորհուրդ է պետք, որը կօգնի ուսուցչին: Քանի որ ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկումը դասապրոցեսին կկրի ձևական բնույթ, այսինքն երեխան ֆիզիկապես դասասենյակում է, բայց նա որևէ կերպ ներառված չէ համատեղ գործունեության մեջ, չի մասնակցում դասին, պարզապես չի ստանում իրեն հասանելի կրթությունը: Նման կրթությունը ներառական չէ:

Եթե դպրոցում բազմամասնագիտական թիմ չկա, ուսուցիչը մնում է մենակ, վախ է առաջանում՝ Ի՞նչ անել Ինչպե՞ս սովորեցնել:Ուսուցիչը կամ հանձնվում է, կամ սկսում է սովորել:Նախկինում ուսուցիչները հաճախ պարզապես լքում էին դպրոցը: Հիմա սա այլևս տարբերակ չէ: Օրենքը պարտադրում է, պետք է հասկանալ, եթե ցանկանում է ուսուցիչը աշխատել իր մասնագիտությամբ, ապա պետք է սովորի աշխատել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ: Պետք է շփվել ծնողների հետ ու հասկանալ, թե ինչ մոտեցում է պետք երեխային:

Ուսուցչի օգնական:

ՀՀ-ում հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի օգնականը, ուսուցիչների հետ համագործակցելով, իրականացնում է սովորողների կատարողականության դիտարկում և այս կամ այն պատճառով առաջացած դժվարությունների վերհանում: Հիմք ընդունելով հավաքագրված տեղեկատվությունը. ուսուցչի օգնականն աջակցում է ուսուցչին.

• դասի պլանավորման, ընդհանուր և անհատական նպատակների սահմանման, դասապրոցեսի ընթացքում կիրառվող ուսումնամեթոդական խթանիչ նյութերի նախապատրաստման, ինչպես նաև ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացներում:

• Արտադասարանական միջոցառումների կազմակերպման և իրականացման, խմբի գործունեության վերահսկման և վարքի կառավարման աշխատանքներում:

• Ըստ անհրաժեշտության, դասապրոցեսի ընթացքում և դրանից հետո լրացուցիչ աջակցություն է տրամադրում բոլոր, այդ թվում ԿԱՊԿ ունեցող սովորողներին՝ խթանելով կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման, սովորողների անհատական և սոցիալական ձեռքբերումների զարգացման գործընթացը:

- Ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների հետ համատեղ իրականացնում է դասի արդյունավետության գնահատում, ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրների բացահայտում:
  - Համագործակցում է սովորողների ծնողների և խնամակալների հետ

4. Ընտանիքը: Ծնողի դերը ներառական կրթության գործում: Երեխայի ընտանիքը որոշիչ դեր ունի ներառական կրթության իրականացման գործընթացում, քանի որ մասնակից է երեխայի փոխադրմանը տարրական դպրոցից միջին, ապա ավագ դպրոց: Ուստի հարց է առաջանում, թե ինչու է ծնողների դերը հաճախ անկատ մնում երեխաների կրթության գործընթացում: Պատմականորեն շատ երկրներում ընտանիքը կարծես դուրս է մնացել երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմից՝ հիմնականում ստանձնելով մասնագիտական կարծիք լսողի դերը: Նույն իրավիճակը եղել է նաև Հայաստանում, որտեղ ծնողների և մասնագետների երկխոսությունը հաճախ շարունակում է առավել ավանդական և հիերարխիկ բնույթ կրել: Ծնողները կամ ընտանիքի անդամները հիմնականում ներկայանում են հանդիպումների թեստերի արդյունքներին ծանոթանալու կամ իրենց երեխային վերաբերող արդեն իսկ կայացրած որոշումները լսելու համար: Դպրոցը, որպես կանոն, ծնողների հետ կապվում է, երբ նրանցից որևէ բան է հարկավոր կամ երբ ինչ-որ բան է պատահել: Ընտանիքների դերի փոփոխությունը, պլանավորման գործընթացին վերաբերող տեղեկատվությունը, պասիվ ստացողից ակտիվ մասնակցի, վճռական նշանակություն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

ունեցող աշակերտների հերառական կրթության պլանավորման համար: Այս փոփոխությունը թե՛ ընտանիքների և թե՛ մասնագետների համար ինքնին հսկայական փոփոխություն է: Դա կարևոր է, քանի որ ընտանիքն առավել համընդգրկուն տեղեկատվություն է ստանում երեխայի մասին և իմանում է ավելին, քան վկայում են թեստերի արդյունքները: Ընտանիքների մեծ մասը գիտակցում է երեխայի առաջընթացն ու կարիքները, սակայն հիմնականում մնում է որպես պասիվ ռեսուրս՝ չունենալով իր ներդրումն այս գործընթացում: Ընտանիքի ներգրավումը կրթական գործընթացում տրամաբանական մեկնաբանություն և արդյունավետություն ունի: Յուրաքանչյուր հինգերորդ ծնող դժգոհ է իր երեխային կրթական գործընթացում չընդգրկելու իրավիճակից: Սակայն երեխային գործընթացում ընդգրկելու համար անհրաժեշտ է ծնողների և դպրոցի միասնական աշխատանքը, մշտական երկխոսությունը և շփումը: Փոխարենը հաճախ է ի հայտ գալիս կոնֆլիկտ, որը խանգարում է աշխատանքին: Նույնքան կարևոր է նաև ուսուցիչներին գիտելիքներով ՝ ծնողների հետ աշխատելու և երեխաներին կրթական գործընթացում ընդգրկելու համար: Դպրոցի և ծնողների միջև առկա բացը, հարաբերությունների նկատմամբ անվստահությունը լրջորեն խախտում է հերառական գործընթացը: Ծնողը պետք է ունենա մեծ ցանկություն ու կամք, իսկ դպրոցները պետք է աշխատակցեն նրանց հետ, որպեսզի դպրոցն ու ընտանիքը ունենան միանման սպասումներ ու օժանդակեն ուսման գործընթացին: Հետազոտությունը ցույց տվեց, որ դպրոցները, որոնցում ծնողների ընդգրկվածության արդյունավետ ծրագրեր գոյություն ունեն, ստացան բազմաթիվ դրական արդյունքներ, ինչպիսիք են.

- Հաճախության բարելավում;
- Բարձր առաջադիմություն,
- Աշակերտների լավ վարք;

- Ծնողների վստահության բարձրացում դպրոցի ու ուսման նկատմամբ:
- Աշակերտներին օգնում ու մոտիվացնում են սովորել այնպիսի միջավայրում, որտեղ ծնողներին ընդունում են ընկերաբար, հարգում ու գնահատում:
- Համարվում են գործընկեր երեխաների ուսման ու զարգացման գործում:
- Ունեն բազմաթիվ հնարավորություններ ընդգրկվելու դպրոցի գործունեությանը:
- Մշտական շփում ունի դպրոցի անձնակազմի հետ:
- Դպրոցը տալիս է օգտակար տեղեկատվություն, ինչը նպաստում է նրանց ընդգրկվածությանը:
- Ծնողների արդյունավետ ընդգրկվածության ծրագիրը , որն իրականացնում է դպրոցը, պետք է ընդունի ծնողի դերի կարևորությունը:

Եզրակացություն

Ներառումը ավելի հաճախ է քննադատվում, քան խոսվում է այն մասին, թե ինչպես և ինչու է դա կարևոր: Ներառումը պատմություն է ոչ թե ԿԱՊԿՈՒ, այլ բոլորիս մասին:

Դասը դառնում է ներառական, երբ ուսուցիչը կարողանում է կազմակերպել երեխաների համատեղ գործունեությունը, առաջադրանքներ տալ բոլորին և տեսնել բոլորին: Կարևոր է նաև, որ ուսուցիչը իմանա, թե ինչպես է ընթանում զարգացումը, և ոչ միայն տիրապետի առարկայական նյութին: Դպրոցում մենք ոչ միայն գիտելիք ենք փոխանցում, այլև երեխային սովորեցնում ենք ճիշտ վերաբերվել իրեն, ուրիշներին ու աշխարհին:

Համատարած ներառական կրթության արմատավորման համար անհրաժեշտ են ոչ միայն դրան ուղղված օրենքների ընդլայնումը, որը նշանակում է գործընթացի իրականացում վերևից ներքև, այլև դրա՝ ներքևից վերև իրականացման խթանումը, որը հնարավոր է հաշմանդամություն ունեցող անձանց ինքնորոշման ձևավորմամբ: Նրանց ինքնորոշման միջոցով իրականություն կդառնան մի շարք կարևոր օրինաչափություններ ներառականության հետ կապված: Այս գործընթացը պետք է սկսել ընտանիքներից և դպրոցներից, այն կրթական հաստատություններից, որոնք կրթում և դաստիարակում են հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը բացառում է ամեն տեսակի խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր երեխաների հանդեպ: Խտրականությունը երեխաների մեջ սերմանում է վախ, տգիտություն, նախապաշարումներ, չարություն: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության , հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Ներառական կրթության համակարգում ստեղծվում են Ճկուն ուսումնական ծրագրեր, որոնց միջոցով յուրաքանչյուր երեխա կստանա իր կարիքներին և կարողություններին համապատասխան կրթություն: Ներառական կրթության շրջանակներում տվյալ հասկացության ուսումնասիրման կարևորությունն այն է, որ

անձի ինքնորոշումը պետք է հանդիսանա ներառական կրթության նպատակը, այն է՝ ձևավորել ԿԱՊԿՈՒ երեխաների անձնային ինքնորոշման հատկություններ կամ ինքնորոշված անձ: Ներառական կրթության կարևոր գործոններից մեկը ներառականության մասնագետների, ծնողների, ուսուցիչների և աշակերտների միջև ընդհանուր կապն ու համագործակցությունն է: Երբ ուսուցիչը, ընտանիքն ու ուսումնական հաստատությունը համագործակցում են փոխկապակցված ձևով, ուրեմն այդ կոնտեքստում երեխան, այդ թվում ԿԱՊԿ ունեցող, ներգրավվում է հասարակության մեջ և ցուցաբերում բարձր առաջադիմություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://hmk.am/wp-content/uploads/2020/10/%D5%80%D5%B8%D5%A4%D5%BE%D5%A1%D5%AE-%D4%BB%D5%B6%D6%84%D5%B6%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6_Karapetyan_L.pdf
2. https://aspu.am/website/images/website/dasagirq_nerarakan.pdf
3. https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu
4. https://hmk.am/wp-content/uploads/2021/10/PE_GUIDE_Armenian.pdf
5. https://lib.armedu.am/files/resource/files/2022-08-02/2822f9c0ed60fa988b0c4caf75925654.pdf
6. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6